

ՄՏԵՓԱՆԱՎԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

1. Համայնքի ղեկավարը համայնքի տարածքում պետական մշակութային քաղաքականությունը իրականացնում է.

- Մշակույթի պալատի,
- Երաժշտական դպրոցի,
- Արվեստի դպրոցի
- Կենտրոնական գրադարանի միջոցով:

2. Համայնքի ղեկավարը կազմակերպում և կառավարում է դրանց գործունեությունը, իրականացնում դրանց շահագործման և նորոգման աշխատանքները:

2013թ. ընթացքում Կենտրոնական Գրադարանի շենքային պայմանների բարելավման նպատակով կազմակերպվել է միջնապատերի տեղափոխություն և սենյակների քանակների ավելացում:

Մշակույթի պալատի համար ձեռք է բերվել երաժշտական գործիքներ և տեխնիկա: Երաժշտական դպրոցի և մշակույթի պալատի շենքը շահագործելուց հետո (2010թ.) մշտապես կատարվում է ընթացիկ նորոգումներ (տանիքի, հատակի, ջրատարի):

Երաժշտական դպրոցում կա 170 աշակերտ, 21 մանկավարժ:

Արվեստի դպրոցը տեղակայված է ժամանակավոր փայտյա տնակում, որը շահագործվել է 1990թ.-ից, շենքը ֆիզիկապես մաշված է, դասասենյակների միջնապատերը չեն ապահովում ձայնի մեկուսացում, ինչը անբարատնում է երեխաների ուսման որակին: Բազմիցս շենքը վերանորոգվել է, սակայն փայտաշեն լինելը անհարմարավետ է: Դպրոցում կա 140 աշակերտ, որոնց կրթությամբ զբաղվում է 19 մանկավարժ: Շենքի վիճակը չի նպաստում երեխաների մշակութային կրթությանը և գեղագիտական դաստիարակությանը: Դպրոցը բազմաթիվ միջազգային փառատոների մասնակից է և առաջնակարգ տեղեր զբաղեցրած:

Մշակույթի պալատում գործում է գեղարվեստական և ուսուցողական 9 խումբ՝ 145 երեխայով, բացի այդ այլ ծրագրերով գործում է 6 խումբ՝ 93 մասնակցով: Ստեղծագործական անձնակազմը բաղկացած է 10 հաստիքից:

3. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում քաղաքապետարանը կազմակերպում է մասսայական միջոցառումներ Հայաստանի Հանրապետության պետական տոների՝ Անկախության, Հանրապետության, Խաղաղության և հաղթանակի, Ազգային բանակի օրերի կապակցությամբ, ինչպես նաև Եղեռնի ու Երկրաշարժի զոհերի հիշատակության օրեր: Բացի վերը նշվածը, հաճախակի կազմակերպվում են մեծարման երեկոներ, նոր գրքերի քննարկումներ, հետաքրքիր հանդիպումներ անվանի մարդկանց հետ, ինչպես նաև ժամանցային միջոցառումներ:

4. Նպատակասլաց աշխատանք է կատարվում համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության նպատակով: Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և հուշարձանախմբերի պետական ցանկում ներառված 32 հուշարձանից զատ,

քաղաքապետարանը աջակցություն է իրականացնում նաև համայնքային նշանակության հուշարձանների պահպանմանը: Մշտապես իրականացվում է նրանց տարածքների սանիտարական մաքրումներ և ընթացիկ բարեկարգումներ քաղաքի ուսումնական հաստատությունների և այլ կազմակերպությունների միջոցով: Սեփական միջոցներով ամրացվել, նորոգվել, բարեկարգվել և ծաղկապատվել են Սուրբ Սարգիս և Ամենափրկիչ եկեղեցիները, Ս. Շահումյանի, Անհայտ զինվորի, Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հուշարձան-աղբյուրը (1943թ.):

Միջոցներ են հավաքագրվում ԽՍՀՎ Վաստակավոր դերասան Մոս Սարգսյանի հուշարձանը մոտ ապագայում կառուցելու համար:

5. Քաղաքապետարանը մշտական ուշադրություն է դարձնում ժող. ստեղծագործունեության և գեղարվեստական ինքնագործունեության, ազգային արհեստների պահպանմանն ու զարգացմանը:

Քաղաքի ստեղծագործողները հաշվառված են մշակույթի բաժնում: Հատկապես ուշադրության են արժանանում քիչ պահպանված արվեստ-արհեստները, ինչպիսիք են՝ մանրանկարչությունը, փայտի գեղարվեստական մշակումը, ազգագրական պարը, երաժշտական նվագարաններից՝ դուդուկը, սանթուրը, ուղը: Դրանց զարգացման ուղղությամբ նկատելի աշխատանք են կատարում Արվեստի և Երաժշտական դպրոցները, Մշակույթի պալատը:

Քաղաքապետի կողմից մշտապես խրախուսվում են ցուցահանդեսի մասնակից վարպետները և ինքնուս ստեղծագործողները:

6. Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և հասարակության հետ կապերի բաժնում յուրաքանչյուր կազմակերպության համար ստեղծված են առանձին թղթապանակներ (անձնագրեր), որտեղ հավաքագրված են նրանց գործառույթները բնութագրող փաստաթղթերը: Ձևաթղթերը մշակվել և նրանց հավաստիությունը ճշտվում է համապատասխան մասնագետների կողմից: Թղթապանակներում հավաքագրված են՝

- Արտադպրոցական և նախադպրոցական ուսումնական հաստատության դրույքային վարձաչափերի մատյանները (տարիֆիկացիոն)
- ամենամյա և ընթացիկ հաշվետվությունները
- կանոնադրությունները
- աշխատանքային ծրագրերը

7. Ստեփանավանի քաղաքապետարանը սահմանված կարգով որոշ աշխատանք է կատարել բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը կազմելու ուղղությամբ: Ստեփանավան համայնքի գլխավոր հատակագծում առանձին նշվել են «Չեչմանիս» բնակատեղին, «Սրբ. Սարգիս» եկեղեցին, Ստեփան Շահումյանի հուշահամալիրը՝ իրենց պահպանական գոտիներով, իսկ մնացած հուշարձանների մասին չկան հստակ նախագծեր:

8. Ստեփանավանի քաղաքապետարանը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն աջակցել և աջակցում է քաղաքի տարածքում գտնվող

հուշարձանների պահպանության գործին: Քաղաքապետարանի միջոցներով ցանկապատվել է «Չեչմանիսի» բնակատեղի պահպանական գոտին, բարեկարգման աշխատանքներ է իրականացվել մյուս հուշարձանների տարածքում:

9. Որոշ աշխատանքներ են տարվել տեղական նշանակության հուշարձանների ամրակայման, նորոգման, վերանորոգման և տարածքի բարեկարգման ուղղությամբ: Քաղաքապետի անձնական ներդրումներով բարեկարգվել և կանաչապատվել է Երիտասարդական պուրակը, Պիոներների արձանները, Հովհ. Թումանյանի արձանը:

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի վարչական տարածքում գտնվող Հանրապետական նշանակության հուշարձանների նկատմամբ պետության կողմից լիազորություններ չեն պատվիրվել: Ստեփանավանի քաղաքապետարանը սեփական նախաձեռնությամբ և «Սագամար» ընկերության հովանավորությամբ վերականգնել է Ստեփան Շահումյանի հուշարձանի երկրաշարժից ավերված խոյապյուները և բարեկարգել է հուշահամալիրը: Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ է իրականացվել նաև Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հուշադրյուրի, Անհայտ զինվորի հուշարձանի, Երկրաշարժի զոհերի խաչքարի, Եղեռնի զոհերի խաչքարի տարածքում:

11. Ստեփանավան քաղաքի վարչական տարածքում շինարարական, գույրատնտեսական և այլ աշխատանքների կատարման ժամանակ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

12. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում «Տեղական ինքնակառավարման մարմին»-ը օգտագործման կամ վարձակալության հանձնված համայնքի սեփականություն համարվող հուշարձան շենքեր և շինություններ չունի:

13. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Ստեփանավանի քաղաքապետարանի կողմից վերջին 10 տարիներին ապահովվում է համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը:

14. Ստեփանավանի քաղաքապետարանի կողմից հուշարձանի պահպանական գոտում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների վարձակալությամբ տրամադրելու կամ սեփականության կարգով վաճառքի դեպքեր չկան, ուստի օգտագործողների հետ հուշարձանների պահպանության պայմանագրերի կամ պարտավորագրերի կնքման անհրաժեշտություն չկա:

Տեղեկույթը՝ Մհեր Մելիքյանի

12.03.2014թ.